առեալ են, է իբրև զհնոցն բաբիլոնի. վասն որոյ ի դիպիլն քո տօթոյն պասրայու՝ յիշեա զտօթն մաշկաթու։ Ի նաւին՝ բաց ի հասարակաց վշտաց նաւարկութեան, նեղէր զմեզ յոյժ, այլ և զամենայն ուղեկիցս մեր՝ անցկութիւն տեղւոյն և հոտն գարշութեան ամենայն ազգ գազանաց և անասնոց զորս լցեալ են ի նաւն։ (Հ. Մանուէլ և Հ. Սահակ առ Հ. Միք. Չամչեան, 1770 փետր. 7. Մաշկադ)։

մնզ.

Շաբաթով յառաջ երևեցաւ ընդ սահմանաւ հայկ համաստեղութեան գիսաւոր աստղ մի անտուստ ըստ նմանութեան անօսր և լուսաւոր ամպոյ. մարմինն նման է հասարակ աստեղաց, պարածածկեալ ամպանման ցաւատեալ գիսով. օր ըստ օրէ մեծանայ, և շարժի ի հիւսիսակողմն. այժմ է ընդ երկրաւորաւ։ Եւ յասելն իմ ընդ հայկիւ և ընդ երկրաւորաւ, կարծեաք ասեմ. ըստ վեր ի վերոյ զննութեան իմոյ։... Սիմոն կաթուղիկոսն բացեալ է տպարան յէջմիածին. այժմ եկն ոմն յէջմիածնէ, և ըստ որում տեսեալ էր պատմեաց թէ նորոգ տպեցին զտուփարագիրք մի՝ զոր արարեալ է Սիմոն կաթուղիկոսին։ (Հ. Միք. Չամչեան առ Մելգոնեան, 1770 յուլիսի 1. ի Պասրա)։

մնէ.

Ի յունիսի 27, եղև եանղըն ոչ փոքր ի ստամպոլ ի Փիէթրո խափուսին ընդ զառ ի վերն մինչ ի յորմունսն սուլթան սէլիմին. և ըսկսաւ հրդեհն ի յեալըներէն. և էանց ընդ բերդն ի քաղաքն. և այրեցան տունք իբր երկու հարիւրք...։ Ի յունիսի 29 տեսաք յերկինս զգիսաւոր աստղ մի մթագին, որոյ գէաք միգապատք իբր զճառագայթ կային զիւրեաւ. և ընթանայր ի հարաւոյ ի հիւսիս առնելով յաւուրն ընթացս չափ միոյ կենդանակերպի, կամ ասացից, ընթացս՝ որչափ առնէ արեգակն ի միում ամսոջ։ Եւ տեսաք այսպէս աւուրս հինգ. և այլ ոչ երևեցաւ...։ Ժանտախտն օր ըստ օրէ երթալով երթայ և զօրանայ, և այս մանաւանդ ի խալաթիայ։ (Հ. Զաքարիա Ա. առ Մելգոնեան, 1770 յուլիսի 15. [Կ. Պոլիս])։

մնը.

Այն գիսաւոր աստղն մթագին և մեզ երևեցաւ աւելի քան զհինգ օր, և անյայտ եղև։ (Մելգոնեան առ Հ. Զաքարիա, 1770 օգոստ. 22. [Ս. Ղազար])։

մնթ.

Պատերազմունք և խռովութիւնքն որպէս երևին ոչ են վերջանալոց շուտով. քանզի յաւուրս յայսոսիկ պատմեցաւ, թէ մոսկովն զմեծ յաղթութիւնս արարեալ է հագարացւոցն զի պատահեալ նոցա առ հուլթինով՝ անհնարինս կոտորեալ է զնոսա, զ40 հազարս ի նոցանէ գերի վարելով, և զ150 թօփս՝ և զբովանդակ օրտուն յափշտակելով. իսկ զմնացեալսն առ հասարակ ի գետն թունայու խեղդելով. և հազիւ վէզիրն ընդ թաթար խանուն մազապուրծ ազատեալք, և ապա դիմեալ քաջութեամբ ի վերայ պէնտէրին յանուել, յորմէ զօրքն տաճկաց զարհուրեալք զդրօշակն սպիտակ բացեալ անձնատուր լինին, բայց նա չէ մտեալ ի նեղքս յաղագս ժանտամահուն։ (Հ. Անտոն Իւչգարտաշեան առ Մելգոնեան, 1770 օգոստ. 29. [Պաշպալով?])։